րագրով: Վերջին պարագային՝ հարկ է նշել, որ կան ժանրեր (թուղթ, զրույց), որոնց ամբողջական ու ավարտուն դրսևորումները պատմագրության մեջ գրեթե պարտադիր են: Խնդիրը վերլուծելիս, սակայն, անպայմանորեն պետք է հաշվի առնել, թե տվյալ պատմագրական երկը ժանրի զարգացման որ փուլի արգասիք է: Հարցն այն է, որ ոսկեդարյան, ինչպես նաև 10-12–րդ դարերի որոշ պատմիչների աշխատություններում առանձին ժանրերի գոյությունը թեպետ առկա է, բայց դրանք գրեթե աննկատելիորեն են ներդաշնակված բուն կառույցին, իսկ ահա ավելի ուշ շրջանի պատմագրքերն արդեն, այդ թվում՝ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը», այդ առումով որոշակիորեն տարտղնված են և ավելի շատ տարաբնույթ ժանրերի հավաքածու են հիշեցնում, քան տարաբնույթ ժանրերի ներդաշնակ համադրություն: Մյուս կողմից՝ տարբեր շրջաններում պատմագրության ժանրային համակարգում առաջնությունը տրվել է տարբեր ժանրերի: Ահա այս պատճառով, ասենք, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» կամ Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմությունը» հաճախ հնարավոր չէ քննել այն բոլոր մասնավորություններով, որոնցով ստորև քննվելու է Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը:

Միջնադարյան գրական ժանրերի՝ պատմագրության մեջ դրսևորումների վրա պատմիչի ներգործությունը ճիշտ ընկալելու համար հարկ է նշել, որ կոնկրետ Դավրիժեցուն բնորոշ է ժանրային երբեմն ինտուիտիվ զգացողությունը, սակայն նրա ժանրագիտակցությունն այնքան էլ հստակ չէ: Այդ պատճառով, օրինակ, թեպետ վարքագրությունը կամ զրույցը նրա պատմագրքում ներկայանում են ներժանրային ավարտունությամբ ու օրինաչափություններով, բայց Դավրիժեցին հաճախ դրանք անվանում է «պատմություն»: Թեպետ մյուս կողմից էլ այդպիսի ժանրանվանումը կարող է պայմանավորված լինել նաև գրական ժանրերի